ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԲԵՆԻԿ ՎԱՐԴԱՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԹԱՂՄԱՆ ԾԵՍՆ ԸՍՏ ՈՒՇ ԲՐՈՆԶ ԵՎ ՎԱՂԵՐԿԱԹԵԴԱՐՅԱՆ ԴԱՄԲԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ

Է.00.03 «Հնագիտություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան-2020

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ. Պ. Ս. Ավետիսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ.գ.դ. Ռ. Ս. Բաղալյան
պ.գ.թ. Ս. Հ. Դևեջյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2020 թ. մարտի 10-ին, ժամը 14^{00}-ին՝ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի 007 Հնագիտության և ազգագրության մասնագիտական խորհրդում (հասցե՝ Երևան, 0025, Չարենցի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2020 թ. հունվարի 30-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,

պատմական գիտ. թեկնածու Ա. Է. Հարությունյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան հատվածի ուշ բրոնզի և վաղ երկաթի դարերի թաղման ծեսի և հասարակության սոցիալական կազմի ուսումնասիրության սկզբնաղբյուրներից են դամբանային համալիրները:

Թաղման ծեսը (այսուհետ՝ ԹԾ) բնորոշվում է որպես հարազատների, համայնականների կողմից անհատի մահից հետո կատարված արարողությունների հանրագումար: Անհատի կենսաբանական մահից և հուղարկավորությունից հետո նույնպես (սոցիալական մահ) կատարվում են որոշակի արարողություններ (հետթաղումային, հոգեհանգստի):

Մշակութաբանական և սոցիալ-մարդաբանական հետազոտություններում ԹԾ-ը դասվում է անցումային ծեսերի շարքին, որը մեկնաբանվում է որպես մարդու սոցիալական մի կարգավիճակից անցումը մյուսին[1]: Անցումային ծեսում տարանջատվում է երեք փուլ. ա) անջատում (կենսաբանական մահ), բ) տեղափոխման փուլ (լիմինալ փուլ) և գ) վերամիավորման փուլ (հասարակական մահ): Թաղման ընթացքում կատարված ցանկացած գործողություն, արարողություն միտված է դյուրացնելու մի կարգավիճակից մյուսին անցումը: Անցումային ծեսի երեք փուլերն արտահայտվում են որոշակի ծիսական արարողությունների միջոցով. օրինակ՝ թաղման ծեսին բնորոշ են անջատման և տեղափոխմանն ուղղված արարողություններ: Հին հասարակությունների անդամները, կատարելով որոշակի արարողություններ, դրան հաղորդում էին գաղափարական իմաստ (կրոնական, մոգական, գուշակային (կանխագուշակային) ևն: Հասարակական հարաբերությունները և կրոնածիսական կարգը հանդես էին գալիս դամբանների ճարտարապետությունը կարգավորողի, սկզբունքները թելադրողի դերում: Գաղափարական ծանրաբեռնվածությունն է այն պատճառը, որ ԹԾ-ի նյութականացված մնացորդների ուսումնասիրության ժամանակ փաստագրվում են մոգության, զոհաբերության և այլ արարողությունների հետքեր: Այս արարողությունների հանրագումարն է պայմանավորում ծեսի՝ հին հասարակությունների կյանքում կարևոր դեր ունենալու հանգամանքը: Նմանօրինակ արարողությունների նյութականացված մնացորդ է, օրինակ, դամբանի շուրջ մոգական շրջանի՝ հենապատ-կրոմլեխի պատրաստումը, տարատեսակ կենդանական զոհաբերությունները և այլն:

Ժամանակագրական և աշխարհագրական սահմանները: Աշխատանքը նվիրված է Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան հատվածի[2] ուշ բրոնզի (այսուհետ՝ ՈՒԲ) և վաղ երկաթի (այսուհետ՝ ՎԵ) դարերի[3] բնակչության ԹԾ-ի և սոցիալական կա-

---

[1] **Gennep van A.,** The Rites of Passage. Translated by M. B. Vizedom and G. I. Caffee. introduced by S. T. Kimball. Chicago: University of Chicago Press, 1960, 11, 146-147.

[2] Աշխատանքում «Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան հատված» բառեզրին համարժեք է «Կուրարաքսյան Միջագետք» բառեզրը:

[3] Ժամանակագրական սանդղակն ըստ Պ. Ավետիսյանի: Ուշ բրոնզի դար՝ մ.թ.ա. XVI դարի վերջին քառորդ – XII դարի առաջին կես, վաղ երկաթի դար՝ մ.թ.ա. XII դարի կես - IX/VIII դարի սահմանագիծ: **Ավետիսյան Պ.,** Հայկական լեռնաշխարհը մ.թ.ա. XXIV-IX դարերում (սոցիալ-մշակութային ձևափոխումների դինամիկան ըստ հնագիտական տվյալների), Գիտական զեկուցում, Երևան, 2014, էջ 68:

ռուցվածքի ուսումնասիրությանը: Սակայն աշխատանքում տարբեր հարցերի ուսումնասիրման նպատակով օգտագործվել են Վրաստանի, Ադրբեջանի, Իրանի հյուսիս-արևմտյան հատվածների, Փոքր Ասիայի կենտրոնական հատվածի, Միջերկրական ծովի արևելյան ափերի համաժամանակյա հուշարձանների տվյալները:

Ուսումնասիրության արդիականությունը: Դամբանային համալիրները հանդիսանում են հին հասարակությունների սոցիալական կառուցվածքի և թաղման ծեսի ուսումնասիրության կարևոր սկզբնաղբյուրներից, որոնց կոմպլեքսային հետազոտությունը թույլ է տալիս հետևել սոցիալական կազմի և ԹԾ-ի զարգացումներին, փոփոխություններին: Հայաստանում թաղման ծեսի ուսումնասիրման ոլորտում կատարվել են մեծածավալ աշխատանքներ, սակայն դամբանային կառույցների տվյալներով հասարակությունների սոցիալական կառուցվածքի ուսումնասիրություններ հրապարակում առկա չեն: Հայաստանի մի շարք ՈՒԲ և ՎԵ դարերի դամբանադաշտերի պեղումների արդյունքները և թանգարանների հնագիտական զետեղարաններում պահվող մի շարք հուշարձանների տվյալները կարիք ունեն նոր մեթոդների գործիքակազմով ուսումնասիրման և վերաիմաստավորման: Առաջարկվող ուսումնասիրությունը փորձ է լրացնել նշված բացը, ինչը կատարվել է արդեն հայտնի հուշարձանների տվյալներով, ինչպես նաև շրջանառության մեջ են դրվել նոր նյութեր:

Ուսումնասիրության նպատակը և խնդիրները: Վերջին շրջանում մասնագիտական շրջանակներում մեծ թափ է ստացել հին հասարակությունների սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրների ուսումնասիրությունը՝ պայմանավորված ԹԾ-ի նյութականացված մնացորդների ձևաբանա-վիճակագրական և հին հասարակությունների տնտեսական ներուժի հնատնտեսական ուսումնասիրության արդյունքում ստացված տվյալների ապացուցողականությամբ, ինչպես նաև՝ չափելիությամբ:

Ատենախոսության հիմնական նպատակն է լեռնաշխարհի քննվող հատվածի ՈՒԲ և ՎԵ դարերի դամբանային համալիրները բնութագրող հատկանիշների քննական և համեմատական վերլուծության միջոցով վեր հանել և ուսումնասիրել ԹԾ-ը և դրանում կիրառված ծիսական առարկաների, հասարակության սոցիալական կազմի, տնտեսության մասին եղած հնագիտական տվյալները: Նշված նպատակին հասնելու համար առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

ա) Կազմել ԹԾ-ի և հասարակության սոցիալական կազմի ուսումնասիրության համար տվյալների հաշվառման նախնական աղյուսակ: Հիմնվելով այդ աղյուսակի վրա՝ մշակել Կուրարաքսյան Միջագետքի ԹԾ-ին բնորոշ հատկանիշների ցուցակ և ձևաբանեցման աղյուսակ:

բ) Ըստ ձևաբանեցման աղյուսակի վեր հանել տարածաշրջանի ԹԾ-ին բնորոշ տեղային, համընդհանուր և մասնավոր հատկանիշները և դրանցով կատարել հատկանիշների ներխմբային և միջխմբային վերլուծություն:

գ) Ձևաբանա-վիճակագրական վերլուծությամբ պարզել ԹԾ-ի կատարման հաջորդականության, թաղման կառույցի և թաղվածի սոցիալական և սեռա-տարիքային հատկանիշների միջև փոխկապակցվածությունը:

դ) Վեր հանել տարբեր եղանակներով կատարված թաղումների, աճյունի՝ անատոմիական լրակազմի ամբողջական պահպանված կամ խախտումով թաղումների ուսումնասիրության խնդիրները:

ե) Պարզել մի դամբանադաշտում տարբեր կարգավիճակ ունեցող ննջեցյալների միջև հարաբերության բնույթը (ներքին աստիճանակարգությունը), նաև թաղմանն ուղեկցող գույքի և աճյունի կենսաչափական տվյալների միջև կապը:

զ) Համեմատական և վիճակագրական մեթոդի օգնությամբ՝ պարզել որոշ արարողություններում կիրառված առարկաների ներ- և արտատարածաշրջանային կապերը, ինչպես նաև պարզել աճյունի սեռա-տարիքային հատկանիշների և գույքի տեսականու միջև կապը:

է) Ճշգրտել մասնագիտական գրականության մեջ ընդհանրական անվանումով նույնականացված, սակայն տարբեր գործառույթներ ունեցող, առարկաների կիրառության ոլորտները և զուգահեռները՝ տալով դրանց տեղը լեռնաշխարհի հնագիտական մշակույթների ժամանակագրական համակարգում:

ը) Ուսումնասիրել և ամբողջացնել ԹԾ-ի առանձին դրվագների նյութական մնացորդների վերլուծության շնորհիվ բնութագրվող սոցիալական խմբերի թաղումներին բնորոշ հատկանիշների ցուցակը:

թ) Ուսումնասիրել բրոնզ-երկաթեդարյան հասարակությունների տնտեսական տարբեր ոլորտներին վերաբերող հարցերը և դրանցում կիրառված գույքի տեսականին:

ժ) Լրամշակել և ամբողջացնել ՈՒԲ և ՎԵ հասարակության մեջ առաձնաշնորհյալների թաղումներին բնորոշ հատկանիշների ցուցակը:

Ուսումնասիրության կատարման մեթոդաբանական հիմքը: Հին հասարակությունների ԹԾ-ի և սոցիալական կառուցվածքի ուսումնասիրության համար օգտագործվել է Վ. Գենինգի և Վ. Բորզունովի առաջարկած մեթոդաբանությունը[4], որը մինչ օրս քննվող հարցերի համար արևմտյան և ռուսական հնագիտական դպրոցներում առավել օգտագործելի մեթոդներից մեկն է[5]: Հին հասարակությունների տնտեսական ներուժն ու տնտեսությանն առնչվող առարկաների ուսումնասիրությունը կատարվել է վիճակագրական, ձևաբանական և համեմատական մեթոդի օգնությամբ: Թաղմանն ուղեկցող գույքի ուսումնասիրությունը կատարվել է ձևաբանության, համեմատական մեթոդի կիրառմամբ:

---

[4] **Генинг В., Борзунов В.,** Методика статистической характеристики и сравнительного анализа погребального обряда, Вопросы археологии Урала. 1975. Вып. 13, стр. 42-72. **Генинг В., Бунятян Е., Пустовалов С., Рычков Н.,** Формализованно-статистические методы в археологии (анализ погребальных памятников), Киев, «Наука думка», 1990, стр. 6-204. Шмуратко В., Статистические методы в археологических исследованиях: история развития (конец XIX - 60-е гг. XX в.), Исторические, философские, политические и юридические науки, культурология и искусствоведение, Вопросы теории и практики, 2013 №5 (31), стр. 195-200.

[5] **Кайзер Э.,** Эгалитарное пастушеское общество versus воины-кочевники? Попытка реконструкции социальной структуры ямной и катакомбной культур, Stratum Plus, 2010, стр. 99-120. ԹԾ-ի ձևաբանեցման առաջին փորձերը արվել են դեռևս Քիշի պեղումների հրատարակության ժամանակ: **Mackay E.,** Report on the excavation of the "A" cemetery at Kish, Part I, Mesopotamia Field Museum of Natural History, Anthropology Memoirs №61. Chicago, 1925, p. 2.

Հիմնախնդրի ուսումնասիրության վիճակը: Չնայած Հայաստանում պեղված են ՈՒԲ և ՎԵ դարերի մեծաթիվ դամբանային համալիրներ՝ հրատարակված և ուսումնասիրված են միայն դրանց մի մասը: Հրատարակություններում մեծամասամբ տրված են թաղմանն ուղեկցող առարկաների նկարագրությունը և զուգահեռները, դամբանի կառուցվածքը և ժամանակագրության հարցերը, սակայն աճյունի (առկայության պարագայում) հնամարդաբանական ուսումնասիրության բացակայությունն առաջացնում է մեծ խոչընդոտ թաղման ծեսն ու սոցիալ-ժողովրդագրությունն ուսումնասիրելու ճանապարհին:

Հայաստանում հնագիտական սկզբնաղբյուրներով ձևաբանա-վիճակագրական մեթոդով ԹԾ-ի ուսումնասիրության առաջին փորձերը կատարվել են անցյալ դարի վերջին քառորդում[6]: Պ. Ավետիսյանն ուսումնասիրել է Թալինի և Հոռոմի դամբանադաշտերի ԹԾ-ն ու սոցիալ-ժողովրդագրության հարցերը՝ նշելով, որ մեթոդը հնարավորություն է տալիս լուծելու միաժամանակ մի քանի խնդիրներ. մեկ կոնկրետ դամբանի ձևաբանական նկարագրության, մի միավորի հարաբերությունը համալիրի մյուս միավորների հետ, որը կապահովի հետագա աշխատանքների համար հատկանիշների ընտրության օբյեկտիվությունը: Նշվում է նաև, որ «հասարակության մեջ ունեցած դիրքի և տարիքային ցենզի միջև կապն ակնհայտ է և շատ որոշակի»: Սոցիալական կարգավիճակ կրող տղամարդիկ եղել են նահապետական մեծ ընտանիքների և «սոցիալական կոնկրետ խմբի շրջանակներում այդ ընտանիքի սոցիալական դերի ու նշանակության կրողները»[7]:

ՈՒԲ դարի ԹԾ-ին նվիրված թեկնածուական ատենախոսություն է պաշտպանվել և բազմաթիվ ամփոփող հոդվածներ է գրվել Գ. Թումանյանի կողմից[8]: Նա իր ուսումնասիրություններում մանրամասն քննել է դամբանների կառուցվածքային առանձնահատկությունները, թաղման եղանակները, դամբանի մասին հին հասարակությունների ունեցած պատկերացումները և այլ հարցեր[9]:

Մ. Պոգրեբովան, օգտագործելով նշված մեթոդը, կազմել է առանձին դամբանաբլուրների ԹԾ-ի հատկանիշների ցուցակ[10]: Սակայն նրա առանձնացրած հատկանիշների ցուցակում ընդգրկված չեն մի շարք առանցքային հուշարձանների տվյալներ:

---

[6] **Ավետիսյան Պ.,** Դամբանային հուշարձանը և թաղման ծիսակարգի վերակազմության խնդիրները (որոշ նկատառումների և հարցադրման շուրջ), անտիպ, էջ 31:

[7] **Ավետիսյան Պ.,** նշվ. աշխ., անտիպ, էջ 31-33:

[8] **Թումանյան Գ.,** Ուշբրոնզեդարյան թաղման ծեսը Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում (ըստ հնագիտական տվյալների), պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, 1997; **Թումանյան Գ.,** Հայաստանի ուշբրոնզեդարյան դամբարանների կառուցվածքը, ՊԲՀ, 2003, №1, էջ 166-185; **Թումանյան Գ.,** Թաղման ծիսակարգերը ուշբրոնզեդարյան Հայաստանում, ՊԲՀ, 2007, №1, էջ 138-152:

[9] **Թումանյան Գ.,** Ուշբրոնզեդարյան Հայաստանում թաղման ծիսակարգերի պայմանավորվածությունը մահվան պատկերացումներով, ՊԲՀ, 2009, № 3, էջ 121-135; **Թումանյան Գ.,** Բրոնզեդարյան դամբարանները մահվան պատկերացումներում և դրանց կառուցվածքի առանձնահատկություններ, ՊԲՀ, 2011, № 2, էջ 212-225:

[10] **Погребова М.,** История Восточного Закавказья: вторая половина II-начало I тыч. до н.э. (по археологическим данным), М., Вос. лит., 2011.

Բացի այդ, ցանկում ընդգրկված ընտրույթներում բացակայում են աճյունների սեռատարիքային բնութագրումները[11]:

Հին Հայաստանի Վե դարի թաղման ծեսին և սոցիալական կազմին առնչվող մի շարք հիմնահարցեր դեռևս մնում են չուսումնասիրված և չպարզաբանված:

Ուսումնասիրության գիտական նորույթը: Դամբանային համալիրների ձևաբանական ուսումնասիրության նպատակը ոչ թե տվյալների զուտ տեխնիկական մշակումն է, այլ դրանց մեկնաբանությունը և, ըստ այդմ, ԹԾ-ի և ծիսակարգի, հնագույն և հին հասարակությունների կառուցվածքի, պատկերացումների համակարգի, հասարակական հարաբերությունների վերակազմությունը և ուսումնասիրությունը:

Թաղման ծեսի հիմնական պարամետրերի միջև փոխադարձ կապի բացահայտման միջոցով հրապարակային պաշտպանության է դրվում Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան հատվածի մինչուրարտական շրջանի հասարակության սոցիալական կազմն ու կառուցվածքը բնութագրող նոր մոդել և հետազոտության համակարգ:

ԹԾ-ի բնութագրման համար առանձնացվել է նկարագրության վեց բաժին, որոնք արտահայտում են թաղման կառույցի պատրաստման, թաղման արարողակարգերի, հետթաղումային և այլ գործողությունների հաջորդականությունը: Այդ նպատակով դուրս է բերվել ԹԾ-ի ավելի քան 492 հատկանիշ: Հաշվարկվել է 492 *հատկանիշի միտում*[12], որով և կատարվել են ներ- և միջխմբային վերլուծությունները: Նշված հատկանիշների վիճակագրական և ձևաբանական ուսումնասիրության արդյունքում ստեղծվել են տարատեսակ աղյուսակներ, գծապատկերներ, որոնք արտահայտում են հատկանիշների միջև փոխկապակցվածությունը, վեր են հանում ԹԾ-ում մի շարք օրինաչափություններ և այլն: Ի մի բերելով քննվող թեմային առնչվող ուսումնասիրություններում տեղ գտած որոշ դրույթներ՝ ատենախոսության մեջ վերանայվում են ՈՒԲ և Վե հասարակության ԹԾ-ին, սոցիալական կառուցվածքի, տնտեսության (անասնապահության, երկրագործության ևն) վերաբերող մի շարք հարցեր և տրվում նոր մեկնաբանություններ[13]: Հնարավորինս վերականգնվել է քննվող ժամանակաշրջանում սոցիալական տարբեր կարգավիճակ ունեցող անձանց թաղման ժամանակ կատարվող արարողությունները և դրանցում օգտագործված առարկաների գործառույթները (հոգեհաց, խնկարկում, հեղում ևն): Ըստ հնագիտական տվյալների՝ ուրվագծվել է ՈՒԲ դարում Կուր-

---

[11] **Погребова М.**, там же, 2011, стр. 210-258.

[12] Հատկանիշի միտումը թույլ է տալիս պարզել, թե մի հատկանիշը մի ընտրույթում բաշխվածության օրինաչափությունից ինչքանով է տարբերվում: Այսինքն՝ եթե երկու և ավելի հուշարձաններում ԹԾ-ի այս կամ այն նկարագրման բլոկի հաճախականությունը մյուսի հետ նույնական է կամ մոտ, ապա հատկանիշի հաճախականությամբ էլ պետք է լինեն նույնական կամ մոտ: Ստացված թիվը տատանվում է 0-ից մինչև քննվող հուշարձանների քանակը (օրինակ, եթե քննվում է երկու հուշարձան, ապա ցուցանիշը տատանվում է 0-2.0, եթե 4, ապա՝ 0-4.0, եթե 12, ապա՝ 0-12.0): Հատկանիշների ներխմբային բաշխվածության ստացման արդյունքում առանձնացվում են հատկանիշների երեք խումբ՝ *համընդհանուր* (որոնք հանդիպում են բոլոր հուշարձաններում, թվային միջակայքը՝ 0.8-1.2), *տեղային* (բնորոշ են շատերին, սակայն ոչ բոլորին, թվ. միջակայքը՝ 0.0-0.7), *մասնավոր* (հանդիպում են միայն մեկ կամ մի քանի հուշարձաններում, թվ. միջակայքը՝ 1.3 հուշ. Քանակը):

[13] Ուսումնասիրության հիմնական դրույթներն արտացոլված են սեղմագրում աշխատանքի գլուխների նկարագրության և եզրակացությունների բաժնում:

արաքսյան Միջագետքը և Միջերկրական ծովի արևելյան ափերը բնակեցնող հասարակությունների ակտիվ առևտրական հարաբերությունները, իսկ ՎԵ դարում՝ Իրանական բարձրավանդակի հասարակությունների հետ սերտացող կապերը: Առաջին անգամ ամփոփվել է ՈՒԲ դարի անվավոր փոխադրամիջոցների ուղեկցությամբ թաղումների սոցիալ-ժողովրդագրության հարցերը՝ հիմվելով Լճաշենի, Գեղարոտի, Լոռի Բերդի, Շիրակավանի, Կարաջամիրլիի, Ցիտելգորեբիի և մի շարք այլ դամբանների տվյալների վրա: Նոր մոտեցմամբ ուսումնասիրվել է ՈՒԲ և ՎԵ հասարակությունների տնտեսությանը վերաբերող մի շարք հարցեր, ինչպես նաև՝ անասնապահության, երկրագործության մեջ կիրառված աշխատանքային գործիքների գործառութային, տարածական ընդգրկման և ժամանակագրական հարցեր:

Գիտական շրջանառության մեջ են դրվել Շիրակի, Լոռի-Փամբակի երկրագիտական, ինչպես նաև՝ Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի հնագիտական զետեղարաններում պահվող մի շարք իրեր՝ հայտնաբերված Վանաձորի Դիմաց, Ժդանով, Բազում, Քոսի Ճոթեր, Լեռնապատի (Մակարաշենի), Զոլաքարի, Լճաշենի, Շիրակավանի և Գյումրու մի շարք հնավայրերից: Կազմվել են մի շարք աղյուսակներ, գծապատկերներ, գծանկարներ և նկարներ:

Աշխատանքի պաշտոնական հավանությունը: Թեկնածուական ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի վաղ հնագիտության բաժնի 2019 թ. դեկտեմբերի 23-ի նիստում:

Ատենախոսությունում տեղ գտած մի շարք դրույթներ և առանցքային հարցեր արտացոլվել են հանրապետական և միջազգային հինգ գիտաժողովներում հեղինակի ներկայացրած զեկույցներում: Ուսումնասիրվող հիմնահարցի վերաբերյալ հանրապետական և միջազգային պարբերականներում և նյութերի ժողովածուներում տպագրվել են գիտական ութը հոդված:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, հապավումների և օգտագործված գրականության ցանկից, երկու հավելվածից (աղյուսակներ, գծանկարներ, գծապատկերներ, նկարներ) և ԹԾ-ի ուսումնասիրման ձևաբանական աղյուսակ):

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒՇ ԲՐՈՆԶ ԵՎ ՎԱՂԵՐԿԱԹԵԴԱՐՅԱՆ ԹԱՂՄԱՆ ԾԵՍԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Առաջին գլխում, հիմնվելով ԹԾ-ի ուսումնասիրման ձևաբանա-վիճակագրական մեթոդի և դրանից բխող ԹԾ-ի վերակազմված ընթացքի վեց բաժինների առանձնացման վրա, կատարվել է Կուրարաքսյան Միջագետքի ՈՒԲ և ՎԵ դարերի դամբանային համալիրների թաղման կառույցի, խցի, կից կառույցի, տարբեր եղանակներով կատարված թաղումների սոցիալ-ժողովրդագրական, վիճակագրական ուսումնասիրություն:

Ակնհայտ է, որ ՈՒԲ դարում թաղման ծեսին բնորոշ հատկանիշները խմորվում էին միջին բրոնզի դարի վերջին փուլում: Փոփոխություններ են նկատվում նաև ՈՒԲ դարի առաջին և երկրորդ փուլի հուշարձանների ԹԾ-ը բնութագրող հատկանիշներում. փոխվում են դամբանի կառուցվածքային մանրամասները, խցի ուղղությունը, ի հայտ են գալիս աճյունի հետ վարման նոր եղանակներ, աստիճանաբար կիրառությունից դուրս է մղվում թաղման դիակիզման եղանակը: Փոխարենը երկաթի դարում տիրապետող է դառնում վերաթաղման եղանակը և այլն:

ՈՒԲ, ինչպես նաև ՎԵ դարերի ԹԾ-ում կայուն հատկանիշ է հենապատ-կրոմլեխի առկայությունը: Հենապատ-կրոմլեխները տարբերակվում են *շրջանաձև, քառանկյուն, պայտաձև, պարուրաձև, ուղղանկյուն, երկպարույր, բազմապարույր և անկանոն* ձևերի:

Դամբանադաշտերի կառուցապատման մեջ նկատելի են որոշակի սկզբունքներ, որոնք խոսում են ինչպես սոցիալական շերտավորման արմատավորման, այնպես էլ բնակավայրերի շուրջ ձևավորված դամբանադաշտերի կառուցապատման մեջ ներդրված օգտապաշտական սկզբունքների մասին: Նկատելի է փոխպայմանավորվածություն կրոմլեխի ձևի և աճյունների քանակի, կենսաչափական հատկանիշների միջև:

ՈՒԲ և ՎԵ դարերում առանձնացվում են թաղման խցի հիմնահողային (ներառյալ կատակոմբային և ժայռափոր), քարարկղային, սալարակղային տեսակները: Թաղման խցի կառուցվածքը ենթարկվում է որոշակի փոփոխությունների: Համեմատական վերլուծությունները ցույց են տալիս, որ թաղման խցի կառուցվածքի և վերջինիս չափերի միջև կա փոխադարձ կապ: Ելնելով թաղման խցի չափերից՝ կատարվել է դամբանային համալիրների կարգային բաժանում, ինչն արտահայտում է հասարակության սոցիալական բարդվածության աստիճանը: Այսպես՝ մ.թ.ա. XVI-XIII դդ. համար պայմանականորեն առանձնացվել են ա) մեծ դամբանախցեր (I և II կարգ՝ 3,5/4 և ավելի մ երկ.)՝ ցեղային ազնվականության և առաջնորդների թաղումներ, բ) միջին մեծության դամբանախցեր (III կարգ՝ 2.5-3,5 մ երկ.)՝ համայնական ազնվականության ներկայացուցիչների թաղումներ, գ) փոքր դամբանախցեր (IV-VIII կարգ՝ 0.5-2.5 մ երկ.)՝ հիմնական տեսակ՝ շարքային, համայնական թաղումներ:

ՄԲ-ՈՒԲ և ՈՒԲ-ՎԵ անցումը դրսևորվում է նաև թաղման կառույցի ուղղության փոփոխություններում. ՄԲ-ՈՒԲ անցումային փուլում հիմնահողային դամբաններում տիրապետող հյուսիս-հարավ կողմորոշումը մ.թ.ա. XII դարից փոխվում է արևելք-արևմուտքի, իսկ արդեն հիմնահողային դամբաններում սրահի հիմնական ուղղությունը, սկսած մ.թ.ա. XIII դարի վերջերից, դառնում է արևելք-արևմուտքը:

Սալարկղային դամբաններում տիրապետող էր հյուսիս-արևելքից հարավ-արևմուտք կողմնորոշումը, որը սկսած մ.թ.ա. XIII/XII դդ. փոխվում է՝ հօգուտ արևելք-արևմուտքի: Քարարկղային դամբաններում մ.թ.ա. XVI դարի 2-րդ կես-XV դարի 1-ին կեսում հյուսիս-արևմուտք հարավ-արևելք ուղղությունը դառնում է գերակշռող, իսկ մ.թ.ա. XV դարի 2-րդ կես-XIII դ. նկատվում է նշված ուղղության կտրուկ նվազում: Մուտքը որպես կանոն համապատասխանում է դամբանասրահի գլխակողմի ուղղությանը:

«Կից կառույց» հատկանիշն ՈՒԲ և ՎԵ դարում մասնավոր է: Ելնելով կառուցվածքային հատկանիշներից՝ տարբերակվել են հենապատ-կրոմլեխին արտաքին կողմից

կցված կառույց (ա), դամբանախցի ներսում խորշ կամ ուղեկցող գույքի համար նախատեսված երկրորդ խուց ենթատեսակներ (բ):

Դամբանադաշտերում գերակշռում են անհատական թաղումները, որոնք կազմում են ընտրույթի 73%-ը: Անհատական թաղումների ժողովրդագրական պատկերը հետևյալն է. թաղվածների 42% տղամարդիկ են, 28%-ը՝ կանայք, իսկ երեխաները կազմում են ընդամենը 6%: Եթե ՈՒԲ դարում Լճաշենում մանկական թաղումները կազմում էին որոշակի խումբ և վերջիններիս հատկացված էր դամբանադաշտում առանձին հատված, ապա ՎԵ դարի երկու ընտրույթներում էլ (Թալին, Մաստարա) բացակայում են երեխաների թաղումները: ՈՒԲ և ՎԵ դարերում հայտնի են նաև զույգ աճյուններով (37 միավոր, 5.5%) և խմբային (25 միավոր, 4.7%) թաղումներ: Զույգ աճյուններով թաղումներն ըստ սեռատարիքային խմբերի դասակարգվել են ա) մեծահասակ + նորածին, բ) մեծահասակ + մանուկ), գ) երկու մեծահասակների համատեղ թաղում: Հետազոտության ընտրույթը կազմող դամբանադաշտերում երբեմն հանդիպում են նաև մանուկի և դեռահասի, երկու մանկահասակ երեխաների, մեծահասակի և դեռահասի, երկու դեռահասների համատեղ թաղումներ: Նկատի ունենալով վերջիններիս հազվադեպությունը և բնորոշումների հետ կապված դժվարությունները՝ նշվածները ներկայացրել ենք որպես առանձին խումբ՝ (դ): Ա և Բ խմբի թաղումները բնորոշ են ՈՒԲ դարի առանձաշնորհյալների դամբաններին, իսկ երրորդ խմբի թաղումներում հակված ենք տեսնել ազգակցական հարաբերությունների արտահայտությունը: Կարծում ենք՝ տարաժամանակյա ակտով կատարված թաղումներն ազգակցական հարաբերությունների կրողների թաղումներ են, սակայն այս հարցերի լիարժեք պատասխանները հնարավոր է լուծել միայն ԴՆԹ տվյալների առկայությամբ և վերլուծությամբ:

Մարդու աճյունից զուրկ դամբանները դասակարգում ենք հետևյալ կերպ՝ լրիվ դատարկ դամբանախցեր, որտեղ չի նկատվում ո՛չ թալանման, ո՛չ խաթարման հետք՝ կենոտաֆ (ա): Դամբանախցում առկա է միայն ուղեկցող գույք, սակայն բացակայում են և՛ մարդկային, և՛ կենդանական ոսկորները (բ-1): Դամբանախցում առկա է ուղեկցող գույքի տեսականի (հիմնականում կենտրոնում դրված) և կենդանիների ոսկորների մնացորդներ (բ-2): Դամբանախուց, որտեղ առկա է ծիսական բնույթի գույքի տեսականի և կոնկրետ կենդանատեսակների կմախքներ (հիմնականում ամբողջական): Վերջիններս երբեմն թաղման սրահում զբաղեցնում են կենտրոնական դիրք (գ):

ՈՒԲ և ՎԵ դարերի ԹԾ-ում փաստագրվել են աճյունի հետ վարման տարատեսակ եղանակներ, որոնցից հիշատակելի են դիադրումը, դիակիզումը և աճյունի անատոմիական դիրքի խախտումով թաղումները:

Դիաթաղումը թաղման հիմնական եղանակն է, որտեղ առանձնացվում են աջ կամ ձախ կողքի վրա կծկված (43%), մեջքի վրա ձգված (11 միավոր, 1.6%), բերանքսիվայր (12 միավոր, 1.8%), նստած կամ կքանստած և անորոշ տեսակի թաղումներ: Առկա է աճյունի ուղղության և սեռի միջև փոխկապվածություն: Օրինակ՝ Լճաշենում աջ կողքի թաղվածների մեջ արական սեռի են 56%-ը, իսկ ձախ կողքի թաղվածների մեջ՝ իգական 58%-ը: Բերանքիսվայր թաղումները, կարծում ենք, պետք է պայմանավորված լինեին մահվան հանգամանքներով. օրինակ՝ ըստ ազգագրական տվյալների, բերանքիսվայր

են թաղել ինքնասպաններին, կամ համայնքին վնաս հասցրած որոշ անձանց: Հայաստանում հայտնի բերանքսիվայր թաղումներին բնորոշ հատկանիշների համակազմը գրեթե չի տարբերվում նորմավորված թաղումներից, ուստի, կարծում ենք, որ վերջիններս այն անձանց թաղումներն են, որոնք ինչ-որ կերպ խախտել են տվյալ համայնքի վարքականոնները:

Դիակիզման եղանակով թաղումներն աշխատանքում ներկայացված են 15 միավորով: Եթե քննվող տարածքներում դիակիզման եղանակը ՄԲ-ի դարում հայտնի է առանձնաշնորհյալների թաղումների պարագայում (որը ինչ-որ չափով նաև մնացուկային կերպով պահպանվում է ՈՒԲ դարում), ապա երկաթի վաղ տարածման շրջափուլում այն կորցնում է կատարման սոցիալական պատճառաբանվածությունը: Որքան մեզ է հայտնի, Հայաստանի երկաթի լայն տարածման շրջափուլում տեղական՝ ոչ ուրարտական հուշարձաններում չեն փաստագրվում դիակիզման եղանակով թաղումներ, այն պարագայում, երբ դիակիզումը համարվում է ուրարտական թաղման տիրապետող եղանակներից մեկը:

Աճյունի անատոմիական դիրքի խախտումով թաղումներում տարբերակում ենք դիամասնատման (ամբողջական, մասնավոր), վերաթաղման եղանակներ:

Դիամասնատումը մահից հետո աճյունի մասնատումը և թաղումն է: Ատենախոսության մեջ օգտագործվել են միայն այն դամբանների տվյալները, որոնք հնամարդաբանի կողմից բնորոշվել են որպես դիամասնատում: Այդպիսիք դեռևս առկա են միայն Լոռի Բերդի №№ 103-109 դամբաններում: Մասնավոր դիամասնատման ժամանակ աճյունից առանձնացվում էր գլուխը կամ ստորին ծնոտը, իսկ մարմնի մնացած մասը խցում պահպանում էր անատոմիական դիրքը: ՈՒԲ և ՎԵ դարերում հայտնի է նաև աճյունի անատոմիական դիրքի միտումնավոր խախտումների խառը՝ համակցված տիպ, երբ դամբանում առկա չէ ամբողջական կմախք, փոխարենն առկա է միայն գանգը, ծնոտը կամ աճյունի մի մասը: Ըստ ոսկրաբանական և մարդաբանական դիտարկումների՝ այն թաղումներում, որտեղ առկա է դիամասնատում, մարդկանց ոսկորների վրա կան կենդանիների ատամների, սղոցների և այլ մեխանիկական ազդեցությունների հետքեր, սակայն դա պետք չէ անմիջականորեն նույնացնել զրադաշտականության մեջ կիրառված «*մաքրագործման*» ծեսի հետ: Դիամասնատումը և թաղումը կատարվել են փափուկ հյուսվածքների առկայության պայմաններում: Դամբանախցում սփռված անկանոն դիրքով աճյունի մնացորդները լցվել են հատակին (երբեմն՝ պատգարակի վրա), ինչը կարելի է մեկնաբանել որպես վերամիավորմանը, վերակենդանացմանը նպաստող արարողություն: Վերաթաղման մեջ դիտվում է երկու ենթատեսակ՝ 1) *ամբողջական*, 2) *մասնակի*:

Դամբանածածկն ՈՒԲ և ՎԵ դարերի թաղման ծեսի կարևոր հատկանիշներից է: Քննվող ժամանակաշրջանի դամբանների ծածկերի տարատեսակությունը պայմանավորված էր ինչպես տեղանքով, տեղանքում տարածված հումքով, այնպես էլ կրում էր սոցիալական հետնախորք: Այսպես, նկատելի է փոխկապակցվածություն դամբանի կարգի (I-VIII) և խցի ծածկի ձևի միջև: Հիշատակելի է դամբանածածկի ձևի, մուտքի և խցում աճյունի քանակի միջև կապը: Այն դամբանադաշտերում, ուր փաստագրվել են գերանակապ ծածկեր կամ գերանի օգտագործում, հատկանիշն ունի տեղային բնույթ:

Դա հիմք է տալիս նշել, որ գերանի օգտագործմամբ դամբանները ներկայացնում են տվյալ համայնքում առանձնաշնորհյալների թաղումները: Դամբանածածկի մյուս տեսակների և այլ հատկանիշների միջև չեն նկատվել օրինաչափություններ:

Դամբանաթումբը թաղման կառույցը ծածկող որոշակի բաղադրություն (հող, քար, ավազ) ունեցող թումբն է, որը հիմնականում եզրագծված է հենապատ-կրոմլեխով (ԲՆ՝ 49%): Դամբանաթմբի բացակայությունը ոչ թե ԹԾ-ի կայուն հատկանիշներից է, այլ արդյունք է բնական կամ մարդածին գործընթացների: Այդ պատճառով մի դամբանադաշտում տեսնում ենք քննվող հատկանիշի բարձր միտում, իսկ մյուսում միտումը հավասար է զրոյի:

Կոթողի օգտագործումը ԹԾ-ում բնորոշ է ՈՒԲ և ՎԵ դարերին: Վերջիններս, ըստ հանդիպման միջավայրի, դասակարգվում են՝ 1) կոթողներ, որոնք դրված են եղել դամբանաթմբի վրա կամ լիցքի մեջ, 2) կոթողներ, որոնք դրված են եղել դամբանասրահում՝ որպես ուղեկցող գույք: Լիցքի մեջ կամ խցում հայտնաբերված կոթողները ներկայացված են հետևյալ տեսակներով՝ ֆալոս, քթեիս, մարդակերպ, առանց պատկերագրության կուռքեր և քանդակներ, կոնուսաձև քարեր: ԹԾ-ում կոթողի բնույթը հիմնականում ուներ սեռորոշիչ բնույթ: Օրինակ՝ տղամարդկանց դամբաններում կամ լիցքի մեջ փաստագրվել են ֆալոսներ, իսկ կանանց դամբաններում՝ քթեիսներ և այլն:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ՈՒՇ ԲՐՈՆԶ ԵՎ ՎԱՂԵՐԿԱԹԵԴԱՐՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Լճաշենի դամբանադաշտի կառուցապատման սկզբունքի մեջ հայելային ձևով տեղ են գտել համայնքի սոցիալական հարաբերությունների արտահայտումը, որի ուսումնասիրման համար օգտագործվել է «կարգային բաժանման համակարգը»: Լճաշենի դամբանադաշտի հնամարդաբանությունն ունի հետևյալ պատկերը. ՈՒԲ դարում աճյունի մնացորդներ պարունակող 186 դամբանում առկա են 196 աճյուն, որոնցից 95-ը վերագրվում են տղամարդկանց, 71-ը՝ կանանց, իսկ երեխաներին՝ 30-ը: Լճաշենի բրոնզեդարյան հասարակության մահվան ցուցանիշը 35–40 տ. է, կանանց համար՝ 20–35 տ.: Բարձր է երեխաների մահացության ցուցանիշը, ինչը կապված էր ինչպես բնական գործոններով, այնպես էլ ունի ծիսական հետնախորք: Մ.թ.ա. XV-XIII դդ. Լճաշենում երեխաների աճյուններ պարունակող դամբաններում տարբերակում ենք վերջիններիս թաղման երկու եղանակ՝ *երբ մանկահասակ աղջիկները կամ տղաները թաղվել են առանձին խցերում (ա), երբ երեխաները թաղվում էին մեծահասակի ուղեկցությամբ՝ կա՛մ ոտքերի, կա՛մ գլխի մոտ, հազվադեպ՝ որովայնին դրված (բ)*: Երեխաների դամբաններն իրենց չափերով և կառուցման եղանակով չեն տարբերվում նույն համայնքի մեծահասակների թաղման կառույցներից, ինչը հիմք է տալիս կարծել, որ Լճաշենի ՈՒԲ դարի հասարակությունում երեխաներն ընդունվում էին որպես համայնքի լիիրավ ան-

դամներ, սակայն նրանք, որոնք չէին անցել նվիրաբերման անցումային ծեսը (*ինիցիացիա*), թաղվել են համայնքի դամբանադաշտի առանձնացված, եզրային հատվածում՝ «մանկական գերեզմանատանը»[14]:

Թալինի 88 դամբանում աճյունի մնացորդներ պահպանվել են 85-ում, որոնցից երեքը՝ զույգ թաղումներում, իսկ մեկը՝ խմբային թաղումում: Անհատական թաղումներում (n=48) 31,7%-ը բնորոշվում են որպես տղամարդկանց աճյուններ, իսկ 21-ը (24.7%)՝ կանանց: Մաստարայի համաժամանակյա դամբանադաշտում գործ ունենք փոքր ընտրույթի հետ. 21 դամբանից աճյունի մնացորդներ են փաստագրվել 20-ում: Ընտրույթում մեծ թիվ են կազմում տղամարդկանց անհատական թաղումները, սակայն բացակայում են զույգ և խմբային թաղումները: Թալինի և Մաստարայի դամբանադաշտերում միայն մի դեպքում է հայտնի մանկական թաղում, այն էլ՝ զույգ աճյունով թաղման համատեքստում: Այս հանգամանքն ուսումնասիրողները բացատրում են այդ ժամանակ տիրապետած հատուկ ծեսով, որով երեխաներին կա՛մ չեն թաղել ընդհանուր դամբանադաշտում, կա՛մ թաղել են առանձնացված մի վայրում: Տարիքային հաջորդ երկու խումբը (20-39 տարեկան) և՛ Թալինում և՛ Մաստարայում կազմում են որոշակի տոկոս: Հասարակության սեռա-տարիքային կազմի նույն պատկերն էր տիրում նաև ՈՒԲ դարում: Քննվող երեք համայնքներում տղամարդիկ, ինչպես նաև կանայք, հազվադեպ էին հատում 50 տարեկանի շեմը: Կարծում ենք, այս հանգամանքը պայմանավորված էր հիգիենիկ իրադրությամբ, ինչպես նաև կենսապահովման մակարդակով: Համայնքում հասարակական դիրքի և տարիքային շեմի միջև կապն ակնհայտ է և շատ որոշակի: Ըստ ամենայնի, 40 և ավել տարիք ունեցողները գլխավորել են նահապետական մեծ ընտանիքներ և սոցիալական որոշակի խմբի շրջանակներում այդ ընտանիքի սոցիալական դերն ու նշանակությունն ընդգրկող կարգավիճակի կրողներն են:

ՈՒԲ և ՎԵ դարերի հասարակության սոցիալական կառուցվածքի ուսումնասիրության առումով կարևոր է տվյալ համայնքների տնտեսական ներուժի ուսումնասիրությունն, ինչը սույն աշխատանքում կատարվել է ոլորտների գործունեության մոդելավորման, աշխատանքային գործիքների ուսումնասիրության միջոցով:

Հին հասարակությունների սոցիալական կառուցվածքի ուսումնասիրման համար անհրաժեշտ է նաև ձեռքի տակ ունենալ համաժամանակյա բնակավայրերի տվյալները, որոնք հնարավորություն կտան լրացնել հասարակության սոցիալական կազմի, տնտեսության մասին մեր ունեցած պատկերացումների բացերը: Սակայն ելնելով աշխատանքի առանձնահատկություններից և ծավալներից, սույն հիմնահարցի ուսումնասիրման համար բնակավայրերից և ամրոցներից ստացված տվյալները օգտագործվել են այնքանով, որքանով, որ դա թույլ է տվել թեմայի ուղղվածությունը:

Քննության են առնվել երկրագործության (այդ թվում՝ երկրագործական գործիքներ), անասնապահության և կաթնամթերքի վերամշակման, մանածագործության, կաշեգոր-

---

[14] **Վարդանյան Բ.**, Կուր-արաքսյան միջագետքի ուշբրոնզեդարյան դամբանային համալիրների սոցիալ-ժողովրդագրական վերլուծության խնդիրներն՝ ըստ Լճաշենի տվյալների (մ.թ.ա. 16–13-րդ դդ.), Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ, 3 (ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ: Խմբ. Տ. Դալալյան, Ռ. Հովսեփյան, Ա. Բաբաջանյան), Երևան, ՀԱԻ հրատ., 2019, էջ 72:

ծության համար անհրաժեշտ իրերն ու առարկաները: ՈՒԲ դարում հին հանրությունները տնտեսական մեծ ներուժի կրողն են դառնում: Ընտանիքը հանդես էր գալիս որպես տնտեսական միավոր, սակայն համայնական աշխատանքները կատարվում էին մի քանի ընտանիքներով: Վաղ երկաթի դարում այս համայնքները վերածվում են գերկենտրոնացված միավորների, որոնք, սկսած մ.թ.ա. XII/XI դարերից Արագածի լանջերում, Սևանի ավազանում, Շիրակում, Լոռիում, Արարատյան դաշտում և այլուր, միավորվում են առավել մեծ համայնքների շուրջ՝ դառնալով վաղ քաղաքատիպ կազմավորումներ:

Քննության առնելով կաթնամթերքի վերամշակման անոթներից ձձումների առկայությունը դամբաններում, կարելի է նշել, որ դրանք ՈՒԲ դարում հանդիպում են քիչ քանակությամբ, սակայն, սկսած մ.թ.ա. XIII/XII դարից, գրեթե բոլոր բարձրլեռնային դամբանադաշտերում և բնակավայրերում փաստագրվում են կանթավոր և անկանթ ձձումների բազմաթիվ օրինակներ: Ձձումների քանակային գերակշռումը ՎԵ դարում ՈՒԲ դարի նկատմամբ ևս մեկ անգամ վկայում է անասնապահության և երկրագործության՝ ՎԵ դարում աննախադեպ աճի և զարգացման մասին: ՎԵ դարում խոշոր եղջերավորների և մանգաղների քանակային աճի իրողությունը պայմանավորում էր անասնապահության բուռն զարգացումը և կաթնամթերքի վերամշակման ոլորտում տարատեսակ գիտելիքների կուտակումը: ՈՒԲ և ՎԵ դարի իշխանության խորհրդանշաններ պարունակող դամբաններում հայտնաբերվել են շան մնացորդներ: Հին Հայաստանում և հարակից տարածքներում համայնքի առաջնորդն ընկալվում էր որպես *գերագույն հովիվ* և թաղվում վերջինիս սպասարկող կենդանիների ուղեկցությամբ: Որպես լրացուցիչ փաստարկ նշենք, որ Լճաշենում, Խոջալուում, Խանլարում և այլ դամբանադաշտերի մի քանի դամբաններում հանդիպող կենդանիների հարուստ տեսականին կարող է մեկնաբանվել որպես հոտի մանրակերտ՝ ցույց տալով համայնքի ներսում առաջնորդի ձեռքում կուտակված մեծ քանակությամբ բարիքները: Կարծում ենք, որ շների ուղեկցությամբ թաղումները Հին Հայաստանում պատկանում են տվյալ համայնքի մեջ առանձնաշնորհյալ այն անձանց, որոնք իրենց նույնացնում էին «հերոս արքայի», և/կամ «բարի հովվի հետ»:

Կաշեգործությունը ՈՒԲ և ՎԵ դարերում հասարակության տնտեսական գործունեության կարևոր ճյուղերից մեկն էր: Այդ են վկայում դամբաններում փաստագրված կաշվե մի քանի առարկաների մնացորդները և հետքերը: Թաղման ծիսակարգում մեզ հայտնի տվյալներում կաշի կամ կաշվե առարկաների մետաղական մասերի վաղագույն օրինակներ փաստագրվել են ՄԲ դամբանադաշտում՝ կապարճի կիսածալ գոտեկապերի տեսքով:

Ուշագրավ համատեքստով են ներկայացված իլիկի գլուխ պարունակող դամբանային համալիրները: Դամբանային համալիրներում իլիկի գլուխներ հանդիպում են հազվադեպ, ըստ այդմ թաղման ծիսակարգում դրանք դիտվում են որոշակի գաղափարական ծանրաբեռնվածության կրողներ: Մասնագետների մի մասը նշում է, որ իլիկի գլուխը կապված է մետաղագործության, անիվի գաղափարի, երկրագործության և ռազմական ոլորտների զարգացման հետ (Վիկտորովա և այլք), մյուս մասն այն դիտարկում է որպես մասնագիտության ցուցիչ և կապում տնայնագործության կոնկրետ ոլորտների

զարգացման հետ (Գոլովչենկո և այլք): Անխոս, իլիկի գլուխները (իմա՝ իլիկները) ունեին առաջին հերթին տնտեսական գործառույթ, այն է՝ բրդից և/կամ որոշ բուսատեսակներից թելերի պատրաստումը, սակայն, մանածագործությունը ժամանակի ընթացքում ձեռք է բերում նաև որոշակի կրոնա-ծիսական ենթատեքստ: Ինչպես Կուրարաքսյան Միջագետքի մի շարք դամբանադաշտերում, այնպես էլ ուշէգեյան, սինտաշյան և այլ մշակույթներում քննվող առարկաները հանդիպում են սեռա-տարիքային գրեթե բոլոր խմբերի դամբաններում:

Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան հատվածում սկսած մ.թ.ա. XII դարից, հասարակության ներսում նկատվում են զգալի տեղաշարժեր: Այդ փոփոխությունները դրսևորվում են նաև հասարակության ռազմականացմամբ և զինագործության վերելքով: Լճաշենի՝ ըստ դամբանային նյութերի քննության, չեն ընդգծվում զինակիրների խմբեր. 196 աճյուններից միայն 4 տղամարդու հետ է փաստագրվել զենքի որևէ տեսականի և ևս երեքը՝ կանանց դամբաններում: Մաստարայի ՎԵ դամբանադաշտում պատկերը մի փոքր այլ է. Տղամարդկանց երկու դամբաններում է հայտնի զենքի տեսականի, իսկ նույն ժամանակաշրջանի Թալինում՝ միայն տասներեքում: Հոռոմի համաժամանակյա դամբանադաշտում 155 դամբանից 100-ում առկա են զենքի տարբեր տեսակներ[15]: Արթիկում (n=640) զենքի տեսականի փաստագրվել է ընդամենը 40 դամբանում, ընդ որում 13-ը վերաբերում են ՈՒԲ դարին, 27-ը՝ ՎԵ դարին: Շիրակավանում (n=95) զենքի տեսականի փաստագրվել է 22 դամբանում, որից 14-ը վերագրվում է ՈՒԲ-ին, 8-ը՝ ՎԵ-ին: Շիրակավանի ՎԵ դարի №№16, 114 դամբաններն ունեն կանանց դամբաններին բնորոշ գույքի հստակ տեսականի, իսկ Արթիկի №640 դամբանը, որտեղ դրված էր երեք նետասլաք, դաշույն, նիզակ, ապարանջաններ, ըստ հնամարդաբանների բնորոշման, պատկանել է կնոջ:

ՎԵ դարում այս և մյուս փոփոխությունները, որոնք դրսևորվում են դամբանային կառույցի մանրամասներում, տնտեսության, մշակելի հողատարածքների ընդլայնման և այլ իրողությունների մեջ, վկայում են նշված ժամանակաշրջանում սոցիալական լանդշաֆտում տեղի ունեցած արմատական փոփոխությունների մասին:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՈՒԾ ԲՐՈՆԶ ԵՎ ՎԱՂԵՐԿԱԹԵԴԱՐՅԱՆ ԹԱՂՄԱՆ ԳՈՒՅՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ԹԾ-ի ուսումնասիրության կարևոր բաղադրիչն է թաղմանն ուղեկցող և/կամ արարողության ժամանակ կիրառված գույքը: Ուղեկցող գույքը գործառութային և ձևաբանական հատկանիշներով բաժանվել է *«սպասք», «աշխատանքային գործիք», «զենք», «զարդ», «իշխանության խորհրդանիշ»* և *«այլ»* խմբերի: Նշված խմբերի գույքը հանդիպում է կա՛մ առանձին, կա՛մ համատեղ, ուստի ուսումնասիրության մեջ նշված

[15] **Gevorkyan A.**, Reflections on metal production in Armenia during the Late Bronze and Early Iron Age, ARAMAZD: Armenian Journal of Near Eastern Studies, Volume +IV, Iss. 2, 2009, pp. 36-54, Tabl. 1.

մեթոդի օգտագործմամբ փորձ է արվել վեր հանել որոշ առարկաների՝ ԹԾ-ում ունեցած նշանակությունը, ճշգրտվել են մի շարք առարկաների գործառութային ոլորտները, տարածվածությունը և այլ հարցեր:

Վիճակագրական արժևորման արդյունքում հստակորեն ուրվագծվում են ՈՒԲ դարում Միջերկրական ծովի արևելյան ափերի հետ ակտիվացող առևտրամշակութային փոխադարձ կապերը, իսկ սկսած մ.թ.ա. XIII/XII դարից՝ Իրանական բարձրավանդակի հետ սերտ մշակութային փոխառնչությունները: ՈՒԲ դարում առանձնաշնորհյալների թաղումներում նշված տարածքներից ներկրված կամ դրանց նմանությամբ պատրաստված ապրանքների առկայությունը խոսում է «գաղափարների միգրացիայի», ինչպես նաև սերտ առևտրային կապերի մասին:

ՈՒԲ և ՎԵ դարերի դամբանային համալիրներում հանդիպում են գույքի կրկնվող համակազմ և հանդիպման հատկանիշի մասնավոր միտում ունեցող համալիրներ, ինչը խոսում է նմանատիպ դամբաններում սոցիալական վերակարգության համակարգի դրսևորումների մասին: Ըստ այդմ, տարբերակվել են խնկարկման, հեղման, հացկերույթի, դին (կամ աճյունամոխիրը) փոխադրելու արարողությունների և դրանցում կիրառված առարկաներ:

Հացկերույթի արարողության մեջ օգտագործված առարկաներից հիշատակելի են կեռերը, երկժանիները, եռաժանիները և կաթսաները: Կեռերը, սկզբնապես լինելով կենցաղային առարկաներ, սկսած մ.թ.ա. III հզ. վերջին փուլերից ձեռք են բերում նաև իշխանության խորհրդանշի կարգավիճակ. ցլագլուխ (կամ կենդանագլուխ) բռնակով և զարդարուն իրանով առարկաները հանդիսացել են առանձնաշնորհության ցուցիչ: Կեռերի մի խումբը հանդիպում է բացառապես կաթսաների համատեքստում: Դրանք օգտագործվել են հոգեհանգստի հացկերույթի ժամանակ՝ եփված միսը կաթսայից հանելու նպատակով: Կաթսաների հետ հանդիպում ենք նաև երկժանիներ և եռաժանիներ: Վաղագույն եռաժանիները Լճաշենի երկու դամբանաբլուրների օրինակներն են, որոնց անմիջական զուգահեռները հայտնի են Քիրբեթ Ջեդուր-1-ում և Հալա Սուլթան Թեքեում (Ակկոյի և Ուգարիթի օրինակները մի փոքր ուշ փուլի են պատկանում): Երկժանիները, սկսած մ.թ.ա. XIII դարից, իրենց վրա են վերցնում եռաժանիների և կեռերի գործառույթները և հանդիպում են առանձնաշնորհյալների դամբաններում՝ կաթսայի (երբեմն՝ կեռերի), իշխանության այլ խորհրդանշանների համատեքստում:

Բազմափող անոթները դասակարգվել են 1) գնդաձև իրանով, կարճ վզով «մայր» անոթներ, որոնք իրանին ունեն փողեր (լոռիբերդյան խումբ), 2) գնդաձև իրանով, կարճ վզով, դեպի դուրս բացվող շուրթով անոթներ, որոնց իրանին կան սրվակաձև փոքր անոթներ (կարաջամիրլյան խումբ), 3) քրեղանատիպ անոթներ, որոնց իրանին (հիմնականում շուրթի տակ) առկա են սրվակաձև անոթներ, 4) ձվաձև իրանով, կողային սրվակաձև փողերով կամ բաժակներով անոթներ, 5) «մայր» անոթներ, որոնք ունեն ցածր պատվանդան, իսկ իրանին կից են սրվակաձև անոթներ, 6) օղակաձև կերնոսներ: Նշված անոթներն ունեցել են կիրառության կարճ ժամանակահատված և տարածում: Ենթադրում ենք, որ անոթների մի քանի խմբերը ծառայել են գարնանամուտի տոնակատարությունների արարողությունների ժամանակ (խնկարկման, հեղման,

ըմպման ևն), II-III խմբերի անոթներում, կարծում ենք, պետք է վառվեր անուշահոտություն, իսկ կողային գավաթներում մատուցվեր փոքր քանակով զոհաբերության որևէ նյութը[16]: Վեցերորդ խմբի օղակաձև անոթները նույնականանում են հունական աղբյուրներից հայտնի «կերնոսների» հետ:

Պատվանդանները դասակարգվել են՝ կարմիր և սպիտակ մածուկով ագուցված կամ վրադիր զարդանախշերով սնամեջ իրանով անոթներ (հիմնական տիպ՝ ա): Խցում այս անոթների վրա հանգչում էին կողային չորս բռնակներ ունեցող անոթները (երբեմն՝ ծիսական «արկղեր»): Սրանք խեցեգործական տեղական ավանդույթների զարգացման արգասիք են: Վերջիններս ծառայել են որպես պատվանդաններ այլ անոթների համար: Օվալաձև կամ եռանկյունաձև բացված «պատուհաններով» սնամեջ իրանով անոթներ (բ): Այս անոթների ներքին մակերեսին առկա են կրակի երկարատև ազդեցության հետք: Վերջիններս իրենց անմիջական զուգահեռներն են գտնում Միջերկրական ծովի արևելյան ափերի և Եփրատի միջին հոսանքի հուշարձանների համաժամանակյա շերտերում: Այս խմբի անոթներն ՈՒԲ դարի վաղ փուլում ներթափանցել են քննվող տարածքներ և տեղայնացվել՝ պահպանելով լևանտյան օրինակներին բնորոշ որոշ առանձնահատկություններ: Գլանաձև վզով, ստորին հատվածում գնդաձև իրանով անոթներ, որոնք հայտնի են Մեծամորի *«քրմի»*, Լճաշենի №№1, 150 և այլ դամբաններից (գ): Երկկոն պատվանդանները հայտնաբերվել են կաթսաների կամ մեծ անոթների տակ՝ այդպիսով ծառայելով որպես անոթի պատվանդան (դ):

Ծիսական «արկղերը» հանդիպում են I-II խմբերի պատվանդանների և հրաբորբերի հետ: Ուղղանկյուն իրանով, քառակուսի կամ օվալաձև պատուհանով, մեջքի կողմից եռանկյունաձև փոքր բացվածքներով, սև փայլեցված, սպիտակ և կարմիր մածուկով ագուցված ձեռաձեփ այս անոթները հայտնաբերվել են Սևանի ավազանի և Հրազդան գետի հովտի հուշարձաններից: «Արկղերը», որոնց մեջ հայտնաբերվել են կենդանական ոսկորներ, ծառայել են որպես զոհասեղան: Դրվելով վառված կրակի վրա, ծուխը բարձրացրել է «արկղի» մեջ՝ ապահովելով զոհաբերության մսի ճենճերումը: Սրանք նույնպես իրենց զուգահեռները գտնում են լևանտյան հուշարձաններում:

Եռոտանի ամանները մեզ հայտնի են երկու խմբով՝ 1) եռոտանի, կաթսայատիպ անոթներ, 2) եռոտանի, սկուտեղատիպ անոթներ: Առաջին խմբի անոթները դամբանային համալիրներում փաստագրվում են ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց դամբաններում: Վերջիններս դրված են աճյունի կա՛մ ոտքերի մոտ, կա՛մ գլխի հետևում, կա՛մ դամբանախցի կենտրոնում: Եռոտանի անոթների մեծ մասի վրա առկա է կրակի ազդեցության հետք, իսկ անոթի շուրթի տակ բացված է միջանցիկ անցք: Կարծում ենք, այս անոթները դամբանախուց դրվել են այն անհատների հետ, որոնք կյանքի ընթացքում այս կամ այն կերպ առնչվել են վերջինիս միջոցով կատարվող արարողություններ-

---

[16] Ըստ պալինոլոգիական մի հետազոտության, որը կատարված է չորրորդ խմբին պատկանող վերիննավերյան մի անոթի պարունակությամբ, անոթում, հավանաբար, պահվել է հոգեներգործուն հեղուկ: **Атоянц А., Арутюнян Р., Алешинская А., Симонян А.**, Палинологические исследования содержания сосудов из гробницы I-B некрополя Верин Навер, «Հուշարձան», տարեգիրք Ժ (խմբ.՝ Հ. Սիմոնյան), Երևան, «Հուշարձան» հրատ., 2015, էջ 57-70:

ին: Միջին բրոնզի դարում անվավոր փոխադրամիջոցների համատեքստում փաստագրվում են քարե եռոտանի անոթներ, որոնք հանդիսանում են ՈՒԲ և ՎԵ դարերի օրինակների նախատիպերը: Սկուտեղանման անոթներն ՈՒԲ և ՎԵ դարերում հանդիպում են Հայկական լեռնաշխարհի հյուսիսային և հյուսիսարևելյան հատվածներում: Սկուտեղանման անոթներն օգտագործվել են որպես շարժական ծխարաններ, որոնք դամբանախուց են դրվել՝ անուշահոտություններ խնկարկելու կամ զոհաբերելու նպատակով:

ՈՒԲ դարի վաղ փուլում առանձնաշնորհյալների դամբաններում փաստագրվել են անվավոր փոխադրամիջոցներ (կամ դրանց փոխարինող մասերը): Անդրադարձ է կատարվել փոխադրամիջոցի ուղեկցությամբ թաղումների սոցիալ-ժողովրդագրության հարցերին: ՈՒԲ դարում փոխադրամիջոցների ուղեկցությամբ թաղումներում աճյունը դրվել է հիմնականում դիադրման եղանակով: Թաղումների 50%-ն անհատական են, որոնց մեջ բնորոշվել են տղամարդկանց 21, կանանց՝ 3, երեխաների՝ 3 աճյուններ: Առկա է նաև խմբային թաղումներ, որտեղ կենտրոնական դիրք գրավոր տղամարդու հետ թաղված կամ զոհաբերված են երկու երեխաներ: Ընտրությամբ դիակիզման եղանակը կազմում է 9.8%: Քառանիվ և երկանիվ սայլերը լծված են եղել խոշոր եղջերավոր անասուններով, իսկ երկանիվ կառքերը՝ ձիերով: Հայտնի է նաև եղջերուներով լծված քառանիվ սայլի օգտագործման դեպք: Երկանիվ կառքերի հետ փաստագրվել են նաև անվաձև այտաճանով բրոնզե սանձեր, որոնք իրենց զուգահեռներն ունեն համաժամանակյա արտատարածաշրջանային մի շարք հուշարձաններում: ՈՒԲ դարի երկրորդ փուլում և ՎԵ դարում դամբաններում այլևս չեն փաստագրվում անվավոր փոխադրամիջոցներ, փոխարենը խուց էր դրվում դրան խորհրդանշող մասերը (շտանդարտ, սանձ, ձի և այլն): Հիշատակելի են Լճաշենի №5 և Արթիկի №3 դամբաններից հայտնաբերված աչքաձև բրոնզե շտանդարտները, որոնք արտաքին կառուցվածքով հիշեցնում են չարխափան գործառույթ ենթադրող «Աչքի կուռքերին»:

Կուրարաքսյան Միջագետքի ՄԲ և ՈՒԲ դարերի անվավոր փոխադրամիջոցներ պարունակող մի շարք դամբաններից հայտնի են բոլորաձև կամ օվալաձև իրանով (8.5-18 սմ երկ., 6.5-10 սմ լայն.) առարկաներ, որոնք ստորին հատվածում ունեն պոչուկավոր կոթառներ (երիթակ): Քննվող առարկաները բնութագրվել են որպես «հայելի», սակայն ի հայտ եկած նոր փաստերի շնորհիվ այս տեսակետը վերանայվել է: Այս առարկաները հայտնաբերվել են անվակունդը սռնիին միացնող հատվածում (երբեմն նաև փայտե երիթակի հետ միասին)՝ ունենալով միաժամանակ մի քանի գործառույթ. ա) մետաղական երիթակը թույլ չի տվել անիվին սահել սռնիից, բ) մետաղյա երիթակը փայտյա երիթակին հաղորդել է հավելյալ ամրություն կամ միաժամանակ ծառայել է որպես անիվի զարդ: Սակայն, վերջիններս ունեցել են նաև ծիսական՝ չարխափան նշանակություն. խեթական մի ծեսում քուրմ-արքան GIŠšušĭazkel առարկան մխրճում էր հողի մեջ՝ մոտահաս չարիքը կանխատեսելու և կանխարգելելու համար: Այսինքն՝ այնպես, ինչպես երիթակն էր ամրացնում անիվը սռնիին, այդպես էլ արքան՝ լաբարնան, իր քրմական գործառույթով այլաբանորեն միավորում էր աստվածներին և մարդկանց՝ միաժամանակ պահպանելով երկրի ամբողջականությունը:

Առարկաների վերջին խումբը, որոնք քննության են ենթարկվել աշխատանքում, երկպարույր և քառապարույր զարդերն են: Մ.թ.ա. II-I հազարամյակներում Հայաստանի մի շարք դամբաններից հայտնի են քառապարույր զարդեր, որոնք հանդիպում են հիմնականում անվավոր փոխադրամիջոցի ուղեկցությամբ՝ կանանց կամ երեխաների թաղումներում: Հայաստանյան ՈՒԲ դարի օրինակներն իրենց ձևաբանական հատկանիշներով բխում են առաջավորասիական օրինակներից, սակայն կրում են տեղական ոսկերչական ավանդույթի խորը կնիքը: Նկատելի է որոշակի իմաստաբանական կապ քննվող զարդատեսակի և անվավոր փոխադրամիջոցի միջև, ըստ որի երկպարույր խարսխաձև կախազարդերը խորհրդանշում են երկանիվ, իսկ քառապարույր զարդերը՝ քառանիվ փոխադրամիջոցները: Պատկերագրային այս կապը տեսանելի է ժայռապատկերներում, այլ զարդաձևերում և քանդակներում:

Եզրակացության բաժնում, իբրև աշխատանքի ամփոփում, տրված են Հայկական լեռնաշխարհի քննվող հատվածի ՈՒԲ և ՎԵ դարերի ԹԾ-ի և հասարակության սոցիալական կազմի ուսումնասիրությունից ստացված հիմնական դրույթները.

Մ.թ.ա. XVI դարի վերջին քառորդից Կուր և Արաքս գետերի միջակայքը բնակեցնող ցեղերը սոցիալ-տնտեսական և մշակութային առումով թևակոխում են զարգացման նոր մակարդակ, ինչը հանգեցնում է սոցիալական բարդվածություն ունեցող հասարակությունների առաջացմանը և ամրապնդմանը:

Վաղ երկաթի դարում, պայմանավորված երկաթի արտադրության մեծացող ծավալներով, ամրոց-բնակավայրերի, դամբանադաշտերի կառուցվածքում, թաղման ծեսում և ծիսակարգում, ինչպես նաև հասարակության սոցիալական կազմում, տնտեսության մեջ ուրվագծվում են փոփոխություններ:

Դամբանադաշտերը ձևավորվել են ամրոց-բնակավայրերի շուրջ: Սակայն հայտնի են նաև դամբանադաշտերից մեկուսի, միայնակ դամբանաբլուրներ: Որոշ դամբանադաշտերի կառուցապատման մեջ նկատվում են կոնկրետ օրինաչափություններ:

Քննվող ժամանակահատվածի ԹԾ-ը կարող ենք բնութագրել հաջորդվող՝ երբեմն զուգահեռվող գործողություններով, որոնք կատարվում էին մահից մինչև հուղարկավորության և դրան հաջորդող՝ հետթաղումային արարողությունների ժամանակ:

Հենապատ-կրոմլեխը, դամբանաթումբն ՈՒԲ և ՎԵ դարերի թաղման ծեսին բնորոշ հիմնական հատկանիշներից են: Կառուցվածքային մանրամասներում՝ կախված դամբանադաշտից և տեղանքից, հոգևոր պատկերացումներից և թաղվողի սոցիալական դիրքից, նկատելի են կառուցվածքային տարբերություններ, որոնք դրսևորվում են կրոմլեխի տրամագծի, քարի ընտրության, թմբի լիցքի տարբերությամբ և այլ մանրամասներում:

Թաղման կառույցի տեղի ընտրությունն պայմանավորված էր ինչպես թաղվողի սոցիալական դիրքով, այդպես էլ՝ տեղանքով և դամբանադաշտում թաղումների խտությունից: Լճաշենի, Շիրակավանի և մի շարք այլ դամբանադաշտերում, առանձնաշնորհյալներին թաղել են ամրոց-բնակավայրի մատույցներում, կամ՝ բարձրադիր բլուրներ վրա: Վերջիններիս հանգստարանը ինչ-որ կերպ հանդես էր գալիս տվյալ դամբանադաշտի կառուցապատման միջուկը: Լճաշենում, Շիրակավանում, Հառիճ-Ար-

թիկում և այլուր, դամբանադաշտի ձևավորման մեջ նկատելի է նաև ժամանակագրության թելադրանքը. որքան հեռու է դամբանը դամբանադաշտի «միջուկից» (կենտրոնից, ամրոցից, բնակավայրից) այդքան ուշ փուլով է այն թվագրվում:

Սեռա-տարիքային տարբեր խմբերի դամբանային կառույցների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս եզրակացնել, որ դամբանադաշտում թաղվողի տեղը, դամբանի կառուցվածքը, ուղեկցող գույքի տեսականին պայմանավորված էր անհատի՝ հասարակության մեջ ունեցած դիրքով և գործառույթներով:

Թաղման խցի ուղղության փոփոխությունն ըստ դարաշրջանների, պայմանավորված պետք է լիներ հոգևոր պատկերացումներով, թաղումը կատարելու պահին տարվա եղանակով: Լճաշենի դամբանադաշտում, ըստ մեր ունեցած տվյալների, առանձնաշնորհյալների թաղումների խցերն ուղղված էին արևելք-արևմուտք, իսկ հասարակության մյուս խմբերի թաղման խցերն ունեին տարբեր ուղղություններ:

Երկրագործությունը, անասնապահությունն, առևտուրը, մետաղամշակությունը և այլն, եղել են հին հանրույթների հիմնական տնտեսական գործունեության ոլորտները: ՈՒԲ և ՎԵ դարերում ի հայտ են գալիս այնպիսի դամբաններ, որտեղ ուղեկցող գույքը վկայում է մասնագիտական խորը շերտավորումների մասին:

Երկրագործությամբ զբաղվել են հասարակության աշխատունակ խմբերը: Այդ մասին վկայում են տղամարդկանց, կանանց և երեխաների ոսկրաբանական հետազոտությունները և դամբաններում դրված ուղեկցող գույքի տեսականին:

Անասնապահությունն ՈՒԲ և ՎԵ դարերի հասարակությունների տնտեսական հզորության կարևոր բաղադրիչն էր: Ուշ բրոնզի դարում ըստ բնակավայրերից ստացված ոսկրաբանական տվյալների, մեծ թիվ են կազմում խոշոր և մանր եղջերավոր անասունների գլխաքանակը՝ վերջիններիս թվային գերակշռությամբ, այն պարագայում երբ ՎԵ դարի բնակավայրերում խոշոր եղջերավոր անասունների մնացորդները դառնում են գերակշռող: Նույն պատկերն ենք ստանում նաև նաև դամբաններից ստացված տվյալներով:

ՈՒԲ և ՎԵ դարի թաղման ծեսի կայուն հատկանիշներից է թաղման ուղեկցող գույքը: Այն ներկայացված է սպասքի, զարդերի, զենքի, իշխանության խորհրդանիշերի և այլ առարկաների տեսքով: Բացի առարկաների ձևաբանական վերլուծությունից, կատարվել է նաև վերջիններիս գործառութային ոլորտների վերակազմություններ, ինչը թույլ է տվել առանձնացնել որոշ արարողություններ: Այսպես՝ վերականգնվում են թաղման ընթացքում կատարված հոգեհաց-ճաշկերույթի, հեղման, ըմպման, խնկարկման արարողություններ: Անվավոր փոխադրամիջոց (կամ վերջինիս փոխարինող մասերով) դամբանները ներկայացնում են ՈՒԲ հասարակության առանձնաշնորհյալներին, որտեղ թաղումը կատարվել է ինչպես դիադրման, այնպես էլ դիակիզման եղանակով: Անվավոր փոխադրամիջոց պարունակող խմբային որոշ դամբաններում տղամարդու, կնոջ և երեխաների աճյունների համատեղ, համազոր թաղումը վկայում է առանձնաշնորհության՝ մեկ ընտանիքի ձեռքում կենտրոնացված լինելու մասին:

Հայկական լեռնաշխարհի ՈՒԲ դարն իրավամբ բնորոշվել է «միջազգայնացման» դարաշրջան: Կուրի և Արաքսի միջագետքը բնակեցնող հասարակությունների առանձնաշնորհյալների դամբաններում հանդիպում ենք մեծ քանակությամբ Միջերկրական

ծովի արևելյան ափի և Եփրատի միջին հոսանքի տարածքներից ներկրված կամ ազդեցությամբ պատրաստված առարկաներ, ինչպիսիք են ծիսական պատվանդանները, «արկղերը», սրերը, զենքեր, կնիքները, ուլունքները, կշռաքարերը, զարդերը և այլն): Հին Հայաստանի՝ առաջավոր- և փոքրասիական առևտրատնտեսական և քաղաքական կյանքին մասնակցությունը դրսևորվում է մի շարք այլ իրողություններում ևս:

Վաղ երկաթի դարաշրջանում Կուրարաքսյան Միջագետքի որոշ հատվածներում փոխվում է հասարակությունների վրա ներգործող ազդեցության ելակետը, Լևանտից փոխվելով Իրանական բարձրավանդակ:

Աշխատանքի վերջում տրված է հապավումների և օգտագործված գրականության ցանկ, ինչպես նաև երկու հավելված (աղյուսակներ, գծագրեր, գծանկարներ, նկարներ և թաղման ծեսի ձևաբանեցման աղյուսակ):

Հետազոտական աշխատանքն իրականացվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնում, ինչպես նաև Գերմանիայի Հալլե-Վիտտենբերգի Մարտին Լյութեր համալսարանում՝ «Հայկական կրթաթոշակ» հետազոտական մեկամյա ծրագրի շրջանակներում:

Ատենախոսության վերաբերյալ հեղինակի հրատարակած աշխատությունների ցանկ

1. Վարդանյան Բ., Ախուրյան գետի վերնահովտի ամրոցները, ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ», 2017, №20, էջ 291-296:
2. Vardanyan B., Die Transformation der spätbronze- und früheisenzeitlichen Gesellschaft im Spiegel der Ausrichtung der Gräber, Բանբեր Հայագիտության, Երևան, 2018, №2 (17), էջ 128-138.
3. Vardanyan B., Eine kurze Übersicht der Siedlungen und Gräberfelder in der Provinz Shirak, in: Herles M., Davtyan R., Bericht über den zweiten Survey in der Provinz Lori (Armenien), Mitteilungen der Deutschen Orient-Gesellschaft zu Berlin (MDOG), 2018, №150, pp. 183-196.
4. Վարդանյան Բ., Կուր-արաքսյան միջագետքի ուշբրոնզեդարյան դամբանային համալիրների սոցիալ-ժողովրդագրական վերլուծության խնդիրներն՝ ըստ Լճաշենի տվյալների (մ.թ.ա. 16–13-րդ դդ.), Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ, 3 (ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ: Խմբ. Տ. Դալալյան, Ռ. Հովսեփյան, Ա. Բաբաջանյան), Երևան, ՀԱԻ հրատ., 2019, էջ 65-78, Աղ. 231-232:
5. Vardanyan B., Wang Ch., Reinhold S., Kalmykov A. et al, Ancient human genome-wide data from a 3000-year interval in the Caucasus corresponds with ecogeographic regions, Nature Communications, 2019, Vol. 10, Article num: 590. https://www.nature.com/articles/s41467-018-08220-8

6. Վարդանյան Բ., Անվավոր փոխադրամիջոցներով ուշ բրոնզեդարյան թաղումների սոցիալ-ժողովրդագրական հետազոտության խնդիրները Կուրարաքսյան Միջագետքում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2019, №1 (110), էջ 334-349:
7. Vardanyan B., Khudaverdyan A., Manukyan S., Shakhmuradyan M., Resorption of the alveolar region in Facies leprosy: a paleoanthropological and paleopathological analysis (Aragatsavan, Armenia), Bulletin of the International Association for Paleodontology, 2019, №3 (1), pp. 1-17.
8. Վարդանյան Բ., Մկրտչյան Լ., Տիրաշենի մշակութային լանդշաֆտը: Նախնական դիտարկումներ, ՇՀՀԿ «Գիտական աշխատություններ», 2019, №22, էջ 194-202:

Варданян Беник Варданович

ПОГРЕБАЛЬНИЙ ОБРЯД И СОЦИАЛЬНАЯ СТРУКТУРА НАСЕЛЕНИЯ СЕВЕРО-ВОСТОЧНОЙ ЧАСТИ АРМЯНСКОГО НАГОРЬЯ ПО ДАННЫМ ПОГРЕБАЛЬНЫХ СООРУЖЕНИЙ В ЭПОХУ ПОЗДНЕЙ БРОНЗЫ И РАННЕГО ЖЕЛЕЗНОГО ВЕКА

РЕЗЮМЕ

В данной диссертации, на основе сведений, полученных из погребальных комплексов, исследован погребальный обряд и социальная структура населения северо-восточной части Армянского нагорья в эпоху Поздней бронзы и Раннего железного века.

Во введении представлена актуальность темы, научная новизна, методы исследования, цель и проблемы, а также краткая история изучения погребального обряда.

В первой главе на основе метода формализовано-статистического анализа, выделено шесть разделов, характеризующих погребальный обряд. Проведено исследование структуры захоронения (кромлех, погребальная камера, прилегающая к ней структура и т.д.), способов обращения с трупом (трупоположение, расчленение, кремация, перезахоронение и т.д.), а также надгробные структуры погребение (кромлех, курган и т.д.).

Выявлен ряд закономерностей, наблюдаемых в связи с характером обращения с трупом и при изучении возрастных и половых характеристик, формы строения гробницы, архитектуры и других деталей погребального обряда.

На примере некрополя Лчашен (ПБВ), Талина и Мастары (РЖВ) в работе рассмотрены социально-демографические вопросы, относящиеся к рассматриваемому периоду, а также средняя численность населения, проживающего синхронно в указанном некрополе (обществах) в течение короткого исторического периода времени, и другие демографические вопросы. Эти вопросы готовят плодородную почву для изучения социально-профессиональных слоев населения за рассматриваемый период времени. В частности, была предпринята попытка моделирования социально-демографических вопросов, связанных с земледелием (включая орудия земледелия), животноводством,

включая форму хозяйства, количество домашних животных, работы на уход за ними и т.д.

Были изучены и остатки ткачества и кожевничество, кроме того, в связи с наличием в могильниках некоторых ткацких рабочих инструментов была предпринята попытка изучить эти предметы.

Важной составляющей погребального обряда является инвентарь, изучение которого осуществлялось формализовано-статистическим и историко-сравнительным методом. По своим функциональным и морфологическим особенностям инвентарь подразделяется на категории "посуда", "орудие труда", "оружие", "ювелирные изделия", "символ власти" и "другие". Была предпринята попытка раскрыть значение некоторых предметов в ритуалах погребения и некоторых церемониях. Были рассмотрены функциональные, распространенные и другие вопросы, связанные с крючками, двузубцами, трезубцами, ритуальными подставками, колесными транспортными средствами и некоторыми их частями, а также некоторыми ювелирными изделиями. В результате статистического исследования определены направления культурных и торгово-экономических связей и влияния в период Позднего бронзового и Раннего железного века в северо-восточной части Армянского нагорья.

Benik Vardan Vardanyan

THE SOCIAL COMPOSITION AND BURIAL RITE OF THE POPULATION OF THE NORTHEASTERN PART OF THE ARMENIAN HIGHLAND ACCORDING TO THE LATE BRONZE-EARLY IRON AGE TOMB COMPLEXES

Summary

Based upon the data obtained from tomb complexes, in the given dissertation the burial rite and social composition of the Late Bronze-Early Iron Age population of Armenia are examined. The Introduction presents the relevance of the topic, scientific novelty, research method, aim and issues as well as the brief history of the study of the burial rite of the examined tombs within the framework of the work.

Based on the method of morphological-statistical study of the burial rite six sections characterizing the burial rite are segregated in this chapter.
According to the order, the study of the burial structure (cromlech, burial chamber, adjacent structure, etc.), then ways of treating the corpse (inhumation, dismembering, cremation, reburial, etc.), as well as the burial surface structure (cover, mound, obelisk, etc.) has been implemented. A series of patterns observed in relation with the manner of treating the corpse and in case of study of the age and sex characteristics, form of the structure, architecture and other details have been revealed.

On the example of the Lchashen (LB), Talin and Mastara (EI) necropoleis, socio-demographic issues related to the period under study, as well as the average quantity of the

population living synchronously in the abovementioned necropoleis (societies) for a short historical period of time and other demographic issues have been examined in the work.

These questions prepare prolific soil for the study of the social and professional strata of the period in question. Particularly, in the dissertation has been made to model the socio-demographic issues related to farming (including farming tools), cattle breeding (including the form of economy, number of domestic animals, man/working time spent on care of the latter, necessary food quantity, working tools for obtaining the latter, etc.) as well as dairy product processing vessels.

The material remains pertaining to weaving and leatherworking have been studied, besides, because of the presence of some weaving working tools in burial complexes an attempt has been made to study also their religious-cultic background.

An important constituent of the burial rite is the accompanying inventory whose study has been implemented by applying the morphological-statistical and historical-comparative method. With their functional and morphological peculiarities, the accompanying inventory is divided into the following categories: "utensils", "working tool", "weapon", "jewelry", "symbol of power" and "other". An attempt has been made to reveal the significance of some of the objects in burial rites and certain ceremonies. The functional, prevalence and other issues linked to hooks, bidents, tridents, ritual stands, boxes, wheeled vehicles and some of their parts as well as several pieces of jewelry have been examined. As a result of the statistical evaluation, the directions of cultural and trade-economic relations and influence during the Late Bronze and Early Iron Ages in the north-eastern part of the Armenian Highland are outlined.

The results of the given study will serve to elucidate a series of issues related to the social demography, social structure and burial rite of the Late Bronze and Early Iron Ages Armenia.